

21.12.2020թ.

ք. Երևան

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ թիվ 438025/15-Վ

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵՎ իրավաբանական վարչության պետ Ա.Մնացականյանս, քննելով վարչական իրավախախտումների վերաբերյալ 21.12.2020 թվականի թիվ 37086 գործը,
ՊԱՐՉԵՑԻ

Համաձայն հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի տվյալների «ԿՈՒՐՈՐՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲԺԿՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ-ի տնօրեն Բենիկ Հարությունյանը (ՀՎՀՀ՝ 00000413, հասցե՝ ՀՀ ք.Հրազդան, Կենտր. Թաղ. 48, 11) ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում չի վճարել ընկերության հարկերը, որի հետևանքով ընկերության պարտավորությունները ՀՀ պետական բյուջեի նկատմամբ առ 24.08.2020թ-ի դրությամբ կազմում են 6.475.686 դրամ, որից 5.712.851 դրամը առաջացել է 2020թ-ի հուլիս ամսվա եկամտային հարկի հաշվարկից, որի համար պատասխանատվություն է նախատեսված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170³ հոդվածով:

Վարչական վարույթի շրջանակներում Բենիկ Հարությունյանին հասցեագրվել է ծանուցագիր՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը և գործի քննությանը մասնակցելու վերաբերյալ: Նկատի ունենալով, որ ծանուցագիրը ստանալու վերաբերյալ հավաստող ապացույց առկա չի եղել, ՀՀ ՊԵՎ իրավաբանական վարչության պետի կողմից 20.10.2020 թվականին կայացվել է վարչական վարույթը կասեցնելու մասին որոշում՝ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի: Կողմին հայտնաբերելու նպատակով ձեռնարկվել են համապատասխան միջոցներ: Գործում առկա չէ առարկություն կամ բացատրություն:

Այն փաստը, որ Բենիկ Հարությունյանի կողմից իրավախախտումը վերջին մեկ տարվա ընթացքում կատարվել է առաջին անգամ, սույն գործով դիտվում է որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածով, 244², 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Բենիկ Հարությունյանի վերաբերյալ հարուցված թիվ 438025/15-կ վարչական վարույթը վերսկսել:
2. Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170³ հոդվածի՝ Բենիկ Հարությունյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակել տույժը 10,000 (տաս հազար) դրամի չափով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ



ՄԱՏԱԿԱՆՅԱՆ

Ծանոթություն: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝ Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40): Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշում հանձնելու օրվանից հետո երեսուցի օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար որոշումը վավեր (պատճենատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարանի կողմից ժամկետում: Խախտողի կողմից տուգանքը դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում: Իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու հաշվեհամարին. 900005240487՝ վճարման անդորրագրի «նպատակ» դաշտում պարտադիր նշելով որոշման համարը: Տուգանքը նշանակելու մասին որոշում իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքը առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով: Ստացա որոշման պատճենը